

ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



БИОБИБЛИОГРАФИЯ

АЛИНЫ АШОТОВНЫ ПАХЛЕВАНИЯ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ
ИМЕНИ КОМИТАСА
КАФЕДРА АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ ФОЛЬКЛОРИСТИКИ

БИБЛИОГРАФИЯ

АЛИНЫ АШОТОВНЫ ПАХЛЕВАНЯН

ЕРЕВАН 2020 ЛИМУШ

**ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**



ԵՐԵՎԱՆ ԼԻՄՈՒՇ 2020

ՀՏԴ 016:78.072

ԳՄԴ 91.9:85.31

Փ 163

Տպագրվում է Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի Գիտական խորհրդի որոշմամբ

Печатается по решению Ученого совета
Ереванской государственной консерватории имени Комитаса

Պատասխանատու խմբագիր՝ դոց. Անահիտ Բաղդասարյան

Ответственный редактор – доц. Анаит Багдасарян

ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԵՎԱՆՅԱՆԻ

Փ 163 ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ/ Պատասխանատու
խմբագիր՝ Ա. Բաղդասարյան.- Եր.: Լիմուշ, 2020.- 80 էջ:

ՀՏԴ 016:78.072

ԳՄԴ 91.9:85.31

ISBN 978-9939-64-334-2

© Փաիկանյան Ա., 2020

© Пахлеваян А., 2020





Հայ ժողովրդի բազմադարյան, հնավանդ, նաև մշտապես նորոգվող, զարգացող, հարստագույն երաժշտական ստեղծագործությունը, իր անեզր անդաստանի բազմապիսի անթիվ երևույթներով հայ երաժշտագետների բոլոր սերունդների հետազոտման, ներշնչանքի և խանդավառության անսպառ աղբյուր է: Հայ երաժշտական ֆոլկլորագիտությունը հայտնի է նվիրական անուններով. Կոմիտաս, Սյ. Մելիքյան, Քր. Քուշնարյան, Մ. Թումանյան, Մ. Մուրադյան, Ռ. Աթայան, Մ. Բրուտյան..., որոնց ֆոլկլորագիտական անդուլ, եռանդուն գործունեության արժանի շարունակողներից է երաժշտագետ-ֆոլկլորագետ Ալինա Փահլևանյանը:

Ծնվել է գյումրեցու ընտանիքում: Սերում է Փահլևանյանների և Հակոբյանների գերդաստանից: Երաժշտասեր ծնողների՝ շնորհալի ինժեներ, գյուտարար հոր՝ Աշոտ Փահլևանյանի և բազմահմուտ մանկավարժ, ֆիզիկոս մոր՝ Անժիկ Փահլևանյան-Հակոբյանի զավակն է: Նախնիները Գյումրիում և այլուր ճանաչված են եղել որպես մտավորականներ: Բասենցի գաղթական ապուպապերը հիմնել են Մեծ Մանթաշ գյուղը՝ շիրակյան գեղատեսիլ, բարեկեցիկ, նաև երգող, նվագող, պարող շենը, որը միշտ գրավել է երաժրշտագետ-ֆոլկլորագետների ուշադրությունը:

Գերազանցությամբ ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային և երաժշտագիտական բաժինները: Ուսանել է հայ երաժշտության երախտավորներ, պրոֆեսորներ՝ դաշնակահար Գեորգի Սարաջևին և երաժշտագետ Մարգարիտ Հարությունյանին:

Մասնագիտական գործունեության առաջին իսկ քայլերից, հանգամանքների բերումով (թե՛ նախախնամության կամոք) զբաղվեց հայ ժողովրդական երաժշտությամբ, կարծում էր ժամանակավորապես, հետագայում ֆոլկլորագետի բանիմացությամբ, փորձով, «պաշարով», տարիների երազանքին՝ երաժշտական միջնադարագիտության դժվարին ասպարեզին առավել արդյունավետ նվիրվելու նպատակով: Սակայն, այլ կերպ դասավորվեց: Ֆոլկլոր էր մուտք գործել մանկուց, ժողովրդական երաժշտության «համն ու

հոտն» առած իր պապի՝ Բասենի ժողովրդական հնավանդ երգի կրող, կատարող, Ներսիսյան ճեմարանում Մ. Եկմալյանի սիրելի սան, մանթաշցի Տիգրան (Պարսամ) Հակոբյանի և Գյումրու պատկերավոր բառ ու բանի սիրահար տատի՝ Վարդանուշ Հակոբյան-Կունջուլյանի ֆուկլորով արդեն իսկ «վարակված» թոռնուհին: Ֆուկլորին նվիրվեց անմնացորդ: Ֆուկլորի նշանաբանով ծավալվեց Փահլևանյանի այսօր մեզանում և դրսում ճանաչված, հեղինակավոր, համբավավոր երաժշտագետ-ֆուկլորագետի շուրջ 60-ամյա բազմաբեղուն, բազմակողմանի գործունեությունը, որն ընդգրկում է երաժշտական ֆուկլորագիտության բոլոր ոլորտները. ժողովրդական երաժշտության հավաքում, նոտագրում, հրատարակում և հետազոտում: Անհրաժեշտ ենք համարում հատկապես նշել այս ոլորտների փոխադարձ կապը, սերտաճման հանգամանքը Ա. Փահլևանյանի գործունեության մեջ: Նրա մանրագնին գիտական հետազոտության առարկան են դառնում, մեծ մասամբ, իր իսկ «հայտնաբերած», նոտագրած, հրատարակած ֆուկլորային նմուշները, որն, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր երաժշտագետ-ֆուկլորագետի գործունեության առավել բնականոն, արդյունավետ, հեռանկարային ընթացքն է:

Տարիներ շարունակ Երևանում, Լենինականում, Էջմիածնի, Ապարանի, Հոկտեմբերյանի, Բաղրամյանի, Հրազդանի, Արթիկի շրջաններում Ա. Փահլևանյանը ձայնագրել է ժողովրդական երաժշտության շուրջ 2500 նմուշ, որոնք ներկայացնում են հայոց ազգագրական ամենատարբեր գոտիները՝ դրանց յուրահատուկ երաժշտական բարբառներով, երգային և նվագարանային ժանրերով:

Առանձնակի նշանակություն ունեն Ալինա Փահլևանյանի կատարած նոտագրությունները: Ժողովրդական երաժշտության նոտագրումը, ինչպես հայտնի է, դժվարին ասպարեզ է: Սուր, նրբազգաց երաժշտական լսողության հետ մեկտեղ, նոտագրողից պահանջվում է նաև ազգային զգացողություն, նոտագրվող նյութի բազմակողմանի և խոր իմացություն, կապված այդ նյութի բարբառային, ժանրային և այլ հատկանիշների հետ: Հարկ է նշել, որ հայ ժողովրդական երաժշտության հնչյունաբարձրությամբ նրբին երանգների և կատարման յուրաձևության մի շարք յուրօրինակ առանձնա-

հատկությունների առավել ճշգրիտ և մանրամասն գրանցման նպատակով Ա. Փահլևանյանը երաժշտական ֆոլկլորագիտության մեջ ընդունված պայմանական նշանների հետ մեկտեղ գործի է դնում նաև իր ստեղծած և ժամանակի քննությունն անցած հատուկ նշաններ, որոնք տարածվել և այժմ հաջողությամբ կիրառվում են հայ երաժշտագետ-ֆոլկլորագետների կողմից: Ա. Փահլևանյանի՝ փորձառու, հմուտ, բազմագիտակ, նոտագրողի հայ ժողովրդական երգերի և նվագների մանրակրկիտ նոտագրությունները հնարավորինս համապատասխանում են բնօրինակին, արտացոլելով վերջինիս հնչյունաբարձրությային, ելեշային, կշռությային, ձայնակարգային և այլ կարևորագույն առանձնահատկությունները: Դրանք լույս են տեսնում ձայնագրյալ ժողովածուներում, նպաստելով հայ ժողովրդական երաժշտության պահպանմանը, տարածմանը, պրոպագանդմանը, ընդգրկվում են գիտական շրջանառության մեջ, առաջ մղելով երաժշտաֆոլկլորագիտական և, ընդհանուր առմամբ, երաժշտագիտական միտքը, ոգեշնչում են կոմպոզիտորներին ազգային ոգով և ոճով երկերի կերտման համար: Ա. Փահլևանյանի նոտագրությունների զգալի մասն արդեն հրատարակված է իր իսկ կազմած և այլ ժողովածուներում, իսկ մի մասն էլ դեռ ձեռագիր վիճակում է: Դրանք հարյուրավոր արժեքավոր ձեռագրեր են, որոնք պահպանվում են Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում, Ա. Փահլևանյանի անձնական արխիվում՝ «սպասելով» հրատարակման «երջանիկ» հնարավորության:

Հավաքչական և նոտագրական գործունեությանը զուգընթաց Ա. Փահլևանյանը, ստեղծագործական նույն եռանդով և ավյունով զբաղվում է ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների նախապատրաստությամբ և հրատարակությամբ, դրանց մեջ ընդգրկելով նաև իր հավաքած և նոտագրած նմուշները: Նա կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի կողմից հրատարակվող «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարի գլխավոր խմբագիրն է: Արդեն լույս է տեսել 13 հատոր:

Ա. Փահլևանյանի հեղինակած և համահեղինակած ժողովածուները առանձնանում են ֆոլկլորային նյութի հստակ դասակարգ-

մամբ և գիտական բարձր մակարդակով: Դրանք նվիրված են ինչպես Հայաստանի տարբեր շրջանների, հատկապես Ապարանի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի՝ Վասպուրականի, Մուշի, Սասունի հայ ժողովրդական երաժշտության հնագույն բնօրրանների և հարստագույն շտեմարանների երգ-երաժշտությանը, որը այլևայլ արհավիրքների պատերազմների, հայոց ցեղասպանության, բռնագաղթի հետևանքով, կտրված, զրկված լինելով իրեն ծնող, սնող «հող ու ջրից», բնական միջավայրերից, ենթակա է անդառնալի կորստյան: Այս իմաստով բացառիկ նշանակություն ունի մեզանում և դրսում հայտնի, նաև փնտրված, մատենագիտական հազվագյուտ նմուշ դարձած «Հայրենի երգեր»-ը, որը հայ իրականության մեջ մինչև վերջերս եզակի էր իբրև մեկ երգասացից՝ Հայրիկ Մուրադյանից ձայնագրված նյութ պարունակող ժողովածու: Այժմ արդեն պատրաստ է տպագրության մեկ երգասացից ձայնագրված նյութերից Փահլևանյանի կազմած մի նոր ժողովածու՝ «Թանկագին ավանդ» (ապարանցի նշանավոր երգասաց, մշեցի և ալաշկերտցի նախնիներից սերվող՝ Իշխան Կարապետյանի ձայնից): Չափազանց արժեքավոր է նաև «Թալին»-ը իբրև Մուշ-Սասուն ազգագրական գոտին ներկայացնող ժողովածու:

Ա. Փահլևանյանի կազմած ժողովածուները՝ ձայնագրված լինելով ծնունդով վասպուրականցի, մշեցի, սասունցի գաղթական, շնորհալի երգասացներից, նրանց սերունդներից, կոմիտասյան «Ակնա երգեր», Սպ. Մելիքյանի և Գ. Գարդաշյանի «Վանի ժողովրդական երգեր», Մ. Թումաճանի «Հայրենի երգ ու բան» դասական ձայնագրյալ ժողովածուների հետ մեկտեղ, և դրանց շարքում, արևմտահայոց երգ-երաժշտության առավել հավաստի աղբյուրներից են:

Հայ ժողովրդի երգաստեղծության փայլուն էջերից մեկի՝ վիպերգության հավաստի աղբյուրներից է «Սասնայ ծռեր դիցազնավեպ» խորագրով ուսումնասիրության մասը կազմող՝ ազգային էպոսի երգվող հատվածների Ա. Փահլևանյանի կազմած համահավաքը, որը այժմ հայտնի առավել լիակատար հրապարակված հավաքածուն է: Բովանդակում է այդ երգվող հատվածների Կոմիտասի, Սպ. Մելիքյանի, Ա. Քոչարյանի, Վ. Սամվելյանի և իր իսկ Ա. Փահլևանյանի, նախկինում հրատարակված, նաև անտիպ

բազմաթիվ նոտագրությունները: Դրանցից են 20 երգվող դրվագ էպոսից, այդ թվում «Մարա Մելիքի զորակոչը», «Դավիթը կովի դաշտում», «Խեղճախոտ խրոխալեր», «Խազար ափսոս» և այլն, նաև էպոսի առանցքը հանդիսացող «Զողորմին»-երի թվով ութ մեղեդիական տարբերակներ: Բացի վերոհիշյալ համահավաքից գրքում առաջին անգամ հրատարակվեց «Սասնա ծռերի» երգվող հատվածների Կոմիտասի գրառումները, կատարված Էջմիածնի վանքի այգեփոր՝ մոկացի Խաչոյենց Զատիկից: Այդ անգնահատելի նյութը (13 հատված)՝ վերծանելով Կոմիտասի սևագրություններից և հայկական նոտանիչներից փոխադրելով եվրոպականի, Ա. Փահլևանյանն այն դրեց գիտական շրջանառության մեջ դեռ 1996 թվականին:

Հետաքրքիր է «Կարոս խաչ» վիպական ասքի պատմությունը, որը մինչև վերջերս հայտնի էր միայն սկզբի ոչ մեծ հատվածի նոտագրմամբ, որ ժամանակին կատարել էին Կոմիտասը և Սյ. Մելիքյանը: XX դարի վերջերին շնորհիվ Ա. Փահլևանյանի հայտնաբերած ամբողջական ասքի երեք տարբերակի մագնիտաֆոնային ձայնագրություններից նրա կատարած վերծանության, հնարավոր դարձավ ստանալ լիակատար տեքստեր, ուսումնասիրել դրանք և հրատարակել առանձին գրքով: Այսպիսով, «Կարոս խաչ»-ի, նորահայտ պատումների Ա. Փահլևանյանի նոտագրությունների միջոցով, Վասպուրականի հոգևոր վիպերգը, հայ երաժշտության անգին գոհարներից մեկը, առաջին անգամ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ ներկայանում է առավել ամբողջական, իր երաժշտաբանաստեղծական բաղադրիչների ողջ համալիրով՝ նախ-երգ, երգ, ասերգ, արտասանություն, ավարտերգ:

Ա. Փահլևանյանի նոտագրություններով և համահեղինակությամբ լույս է տեսել «Հայրենական մեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում» նախկին Խորհրդային Միության տարածքում իր տեսակի մեջ եզակի ժողովածուն, որն արտացոլում է հայ ժողովրդի հույզերն ու մտքերը անցած պատերազմի մասին: Երգերի տեքստերի բանաստեղծական թարգմանությունները հայերենից ռուսերեն կատարել է Ա. Փահլևանյանը:

Հարկ է ավելացնել, որ հայ ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների հրատարակության ընթացքում ի հայտ

եկավ նրա ստեղծագործական անհատականության մի շատ կարևոր երեսակ: Փահիկանյանն այժմ հայ ժողովրդական երգերի բնագրային տեքստերի իր մրցակիցը չունեցող, հայտնի ռուսերեն թարգմանիչն է մեզանում, որն ի գործ է լավագույնս պահպանել և արտացոլել ռուսերեն բանաստեղծական թարգմանություններում բնօրինակի ողջ հմայքը, յուրահատուկ «համն ու հոտը»:

Նշելի է նաև նրա կազմած «Երգե՛, բլբուլս» ձայնագրյալ ժողովածուն (Երևան, 2019), որը հասցեագրված է մանկապատանեկան հասակի երեխաներին: Բաղկացած է նրանց տարիքային հոգեբանությանը և պատկերացումներին բովանդակությամբ, գաղափարապես և մեղեդիապես հասու, հասկանալի և համապատասխան երգերից (թվով 50): Դրանք հիմնականում քաղված են հայ երաժշտական ֆոլկլորագիտության դասականների՝ Կոմիտաս Վարդապետի և նրա սաների՝ Սպ. Մելիքյանի և Մ. Թումանյանի հայտնի, հրատարակված ժողովածուներից, նաև դասական երգասաց Հ. Մուրադյանի բազմահարուստ երգացանկից: Միաժամանակ ժողովածուում ընդգրկված են հայոց կենցաղում մի շարք սիրված և տարածված երգերի՝ կազմողի ձեռքով պատանեկան տարիքին հարկի վերատեքստավորված տարբերակներ, որոնց բառերը Փահիկանյանը փոխառել է Մ. Աբելյանի հանրահայտ խաղիկներից:

Ժողովածուի նյութը շարադրված է հայ ժողովրդական երգեցողության ավանդական՝ միաձայն ձևով: Դրանց կողքին իբրև հավելված Փահիկանյանը ներկայացնում է իր կողմից ստեղծված երկձայն 5 նմուշ՝ ժողովրդական երգի մեղեդուն կցելով իր իսկ մեղեդային տարբերակը կամ երգի համար հորինելով ժողովրդական ոճով նոր ենթաձայն մեղեդի:

Ժողովածուն կարևոր նշանակություն ունի նախ իր եզակիությամբ. հայ ժողովրդական ձայնագրյալ ժողովածուների բազմաքանակ շարքում պատանեկությանն ուղղված օրինակները խիստ սակավաթիվ են: Միաժամանակ ժողովածուն հնարավորություն է տալիս մատաղ սերնդին ներկա խառնիխուռն, օտարոտի ազդեցությունների պայմաններում ժողովրդական երաժշտության գոհարների միջոցով «դարձի գալ» ազգային ակունքներին, նաև առնչվել հայոց մեծերի հայրենասկզբ գործունեությանը, հայեցի երաժշտության միջոցով ծանոթանալ բազմաձայնությանը: Ժողովածուն կի-

րառելի է մանկական թե՛ մասնագիտական և թե՛ ոչ մասնագիտական հաստատություններում: Երկացանկի ընտրությամբ և վերջինիս դասակարգման սկզբունքով ժողովածուն օրինակելի է նմանատիպ այլ ժողովածուների ստեղծման համար:

Ժողովրդական երաժշտության հետազոտությունը Ա. Փահլևանյանի երաժշտաֆոլկլորագիտական գործունեության անբաժանելի մասն է: Ա. Փահլևանյանն անդրադառնում է խնդրո հետ կապված առավել հիմնային և համեմատաբար քիչ լուսաբանված ոլորտներին, մեծ մասամբ դիտարկելով իր «նախասիրած» ազգագրական գոտիների՝ Վասպուրականի, Մուշի, Սասունի երգ ու նվագը:

Այսպես, ժողովրդական երաժշտության նոտագրությամբ Ա. Փահլևանյանը զբաղվում է ոչ միայն գործնականում: Երաժշտական ֆոլկլորագիտության այս կարևորագույն, առաջնային, խնդիրներով լեցուն ոլորտի տեսությանն է նվիրված նրա «Ժողովրդական երաժշտության նոտագրման սկզբունքները ֆոլկլորագիտության զարգացման արդի փուլում (Թալինի շրջանի երգերի օրինակով)» թեկնածուական ատենախոսությունը (Թբիլիսի, 1989), որն իր թեմայով առաջին, և այժմ միակ ուսումնասիրությունն է մեզանում: Ատենախոսության մեջ ի մի են բերված ոլորտի վերաբերյալ հեղինակի երկարամյա և բեղուն գործունեության ընթացքում ձևավորված, մշակված տեսակետները, սկզբունքները, որոնք գալիս են հարստացնելու ժողովրդական երաժշտության նոտագրության թե՛ գործընթացը, թե՛ տեսությունը: Ա. Փահլևանյանն անդրադառնում է նաև երաժշտական ֆոլկլորագիտության «անկյունաքարերից» մեկին՝ երաժշտական բարբառագիտությանը: Պետք է նշել, որ հայոց բազմաթիվ և բազմապիսի երաժշտական բարբառներն այժմ դեռևս կարոտ են բազում հետազոտությունների, որ հատկապես կարևորվում, առանձնակի, և ավելին, հրատապ նշանակություն է ստանում արևմտահայոց երաժշտական բարբառների աղճատման, տարրալուծման, մոռացության վտանգի ներքո գտնվելու պայմաններում: Ա. Փահլևանյանի հետազոտությունները ուղղակիորեն առնչվում են այս խնդրին: Նրա դիտարկման առարկան Մուշ-Սասուն ընդհանրական ազգագրական գոտու երաժշտաբարբառային դիմագիծն է: Ի հայտ են բերվել և ուսումնասիրվել տարածքի ժողովրդական երաժշտությանը հատուկ երգային տեսակները, ելևջային դարձվածքները, կշռույթային կառույցները, ձևակառուցո-

ղական սկզբունքները, որոնք միաժամանակ համեմատվել են Վասպուրականի ժողովրդական երաժշտության երաժշտաբարբառային նույն երևույթների հետ: Հետազոտության արդյունքում հայտնաբերվել է նաև յուրահատուկ հնչողություն ունեցող ձայնակարգ, որը Փահլևանյանն առաջարկել է անվանել «տարոնական»:

Ա. Փահլևանյանի հետազոտական հետաքրքրություններն ուղղված են նաև հայ ժողովրդի էպիկական երգաստեղծությանը: Նկատի ունենք «Կարոս խաչ» վիպական ասքի տարբերակների երաժշտաբանստեղծական տեքստերի համեմատական վերլուծությունը, «Սասնա ծռեր» դյուցազնավեպի երգային հատվածների դիտարկումը, դրանց մեղեդային մտածողության յուրահատկության բնորոշումն իբրև վիպական ասացման երգային կերպ, այլ ոչ թե երգ ժանրային առումով: Դրանով է պայմանավորված երգվող հատվածների հայտնի միակերպությունը:

Երաժշտագետ-ֆոլկլորագետի իր ողջ հմտությունը, հարուստ, բազմաբովանդակ փորձը Ա. Փահլևանյանը անմնացորդ, անշահախնդրորեն, շոայլորեն փոխանցում է երիտասարդությանը: Նա Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ամենասիրված, ճանաչված, հեղինակավոր դասախոսներից է: Մեծագույն սիրով, նվիրվածությամբ, համբերությամբ կրթում, դաստիարակում է ապագա երաժշտագետ-ֆոլկլորիստների (Ա. Փահլևանյանի մասնագիտական դասարանն ավարտել են 40 ուսանող, գրեթե բոլորը գերազանցությամբ): Դրանք փահլևանյանական դպրոցի ներկայացուցիչներ են՝ «գործը լավ իմացող», անսահմանորեն սիրող մասնագետներ՝ երաժշտական ֆոլկլորի հավաքողներ, նոտագրողներ, դասակարգողներ, հետազոտողներ, որոնք ի գործու են գործելու հայ ժողովրդական, նաև գուսանական և աշուղական երաժշտության բոլոր ասպարեզներում:

Փահլևանյանը վերջին տարիների իր «Հայ երաժշտական ֆոլկլորի ռիթմիկայի առանձնահատկությունները» աշխատության մեջ (Երևան, 2014), որը դարձավ դասագիրք կոնսերվատորիայի համար, առաջնորդվելով Կոմիտաս վարդապետի դիտարկումներով և զարգացնելով նրա առաջադրած դրույթները, ներկայացնում և մանրամասն վերլուծում է հայ ժողովրդական, հատկապես երգային ստեղծագործության կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ ռիթմի ժամանակաչափական (կվանտիտատիվ, հիմնված երկար և կարճ

վանկերի համադրության վրա) էությունը: Աշխատության նպատակն է հնարավորինս ճշգրտել, հարստացնել և լրացնել ուսանողների գիտելիքները հայ ժողովրդական երաժշտության ասպարեզում: Միաժամանակ հարկ է նշել, որ այդ աշխատությունը հայ երաժշտական ֆոլկլորագիտության վերջին տարիների առավել արժեքավոր նմուշներից է:

Այսպես երաժիշտներին, սակայն այս անգամ կոնսերվատորիայի մագիստրատուրայի ուսանողությանն է ուղղված Փահլևանյանի «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի խնդիրները» աշխատությունը (Երևան, 2018): Վերջինս նախատեսված է մագիստրանտական նորամուտ նույնանուն առարկայի համար և արդեն իսկ հաջողությամբ և արդյունավետ կիրառվում է գործնականում: Ըստ հեղինակի «... առարկայի սահմաններում ֆոլկլորը դիտարկվում է ոչ միայն գեղագիտական տեսանկյունից իբրև ժողովրդական արվեստի տեսակ, այլ նաև իբրև սոցիալական երևույթ, որը պահանջում է բազմակողմանի ուսումնասիրություն՝ առնչվելով մի շարք հումանիտար գիտությունների հետ, ինչպիսիք են ազգագրությունը, բանահյուսությունը, բարբառագիտությունը, պատմությունը, աշխարհագրությունը, հոգեբանությունը և այլն» (էջ 5-6): Հենց այս նպատակին է ծառայում նշված աշխատությունը, որը հեղինակի՝ փորձառու, հմուտ, նշանավոր երաժշտագետ-ֆոլկլորագետի բազում տարիների դիտարկումների, մտորումների արգասիքն է և անկասկած կխթանի հայ երաժշտական ֆոլկլորագիտության հետագա ընթացքը:

Անդրադառնալով Փահլևանյանի ուսումնամեթոդական գործունեությանը՝ ավելացնենք նաև, որ նա Երևանի Սանկավարժական համալսարանի պրոֆեսոր Յու. Յուզբաշյանի համահեղինակությամբ ստեղծել է հանրակրթական դպրոցների «Երաժշտություն» առարկայի համար նախատեսված դասագրքեր և ուսուցչի մեթոդական ձեռնարկներ:

26 տարիների ընթացքում Ա. Փահլևանյանը ղեկավարել է կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը: Վերջինս, իրականում, իր բազմակողմանի գործունեությամբ (ամբիոնում դասավանդվում և ուսումնասիրվում են հայ ավանդական երաժշտության բոլոր ճյուղերը՝ ժողովրդական, գուսանական աշուղական, միջնադարյան հոգևոր և աշխարհիկ) փաստորեն երաժըշ-

տական հայագիտության ուսումնական և գիտական կենտրոն է հայ իրականության մեջ:

Ամբիոնը Ա. Փահլևանյանը «Ժառանգեց» իր իսկ պատկերավոր բնորոշմամբ՝ որպես «լի, շեն տուն», բազմավաստակ պրոֆեսոր Մ. Բրուտյանից, կոնսերվատորիայի Ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետի երկարամյա ղեկավարից: Կաբինետը ստեղծվեց իր իսկ նախաձեռնությամբ 1969 թվին Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ, իսկ կաբինետին կից հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը հիմնվեց 1988 թվին, որի առաջին վարիչը եղավ հենց ինքը՝ Մ. Բրուտյանը: Փահլևանյանը ժառանգեց և սրբությամբ պահեց, պահպանեց այստեղ հիմնավորված, տարիների ընթացքում կայունացած, հաստատված մասնագիտական ավանդույթները, նաև բարոյական բարձր չափանիշները: Ա. Փահլևանյանի ղեկավարությամբ գրեթե երեք տասնամյակ գործում էր և այսօր էլ շարունակում է հաջողությամբ գործել կոնսերվատորիայում իր աննահանջ, անդրդվելի սկզբունքայնությամբ հայտնի հայ երաժշտության նվիրյալների (Մ. Բրուտյանի խոսքով՝ «խենթերի») համերաշխ կոլեկտիվը, որի ավագ և կրտսեր անդամները փորձառու մանկավարժներ են, Հայաստանում և դրսում հայտնի գիտնականներ:

Ա. Փահլևանյանի բազմազբաղ մասնագիտական գործունեությունը ներդաշնակորեն միահյուսվել է նրա ընտանեկան կյանքի հետ: Ամուսնու՝ անվանի երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, երջանկահիշատակ Գևորգ Գյոդակյանի «թևն ու թիկունքն էր», «պահապան հրեշտակը», շնորհալի զավակների, թոռների պաշտելի մայրը, տատիկը, հայկական շենի հյուրասեր տան տիրուհին:

Ասում են, տանը մեկ լուսատու կլինի (հայոց մեջ սովորաբար նկատի ունեն տան տղամարդուն): Գյոդակյան-Փահլևանյան գերդաստանում լուսատուները երկուսն են:

Անահիտ Բաղդասարյան

Արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի դոցենտ

АЛИНА АШОТОВНА ПАХЛЕВАНЯН

Многовековое, традиционное, но и вечно обновляющееся, развивающееся богатейшее народное музыкальное творчество с многочисленными гранями своего бескрайнего поприща является неиссякаемым источником вдохновения, исследования и воодушевления для всех поколений армянских музыковедов. Армянская музыкальная фольклористика известна заветными именами: Комитас, Сп. Меликян, Х. Кушнарян, М. Тумачан, М. Мурадян, Р. Атаян, М. Брутян..., достойным продолжателем неутомимой, энергичной деятельности которых является музыковед-фольклорист Алина Пахлеванян.

Родилась в семье гюмрийцев. Она – дочь больших любителей музыки: отца – талантливого инженера, изобретателя Ашота Пахлеваняна и матери – многоопытного педагога, физика Анжелы Пахлеванян-Акопян. Предки по материнской линии, беженцы из Басена Исторической Армении, основали в начале XIX века село Мец Манташ Артикского района, славящееся живописностью природы, зажиточностью трудолюбивых крестьян, а также любовью к народным песням, пляскам, что всегда привлекало внимание фольклористов.

А. Пахлеванян окончила фортепианное и музыковедческое отделения Ереванской государственной консерватории имени Комитаса. Училась в классах профессоров, признанных деятелей армянской музыки – пианиста Георгия Вардовича Сараджева и музыковеда Маргариты Гавриловны Арутюнян.

С первых же шагов профессиональной деятельности по стечению обстоятельств (или по воле providения?) занялась армянской народной музыкой, думала временно, с целью в дальнейшем, вооружившись опытом, «запасом» сведущего фольклориста, наиболее успешно посвятить себя труднейшей области – музыкальной медиавистике, давнишней мечте. Однако случилось иначе. Она «вошла» в фольклор с детства, «заразившись» им от деда, познавшего «вкус

и запах» народной музыки, носителя и исполнителя традиционной народной песни Басена, любимого ученика М. Екмаляна в Нерсисянской семинарии, манташца Тиграна (Парсама) Акопяна и бабушки, любительницы гюмрийского устного народного творчества – Вардануш Акопян-Кунджулян.

А. Пахлеванян посвятила себя фольклору полностью. Под знаменем фольклора развернулась почти 60-летняя многогранная плодотворная деятельность признанного в республике и вне ее известного, авторитетного музыковеда-фольклориста, которая охватывает все сферы музыкальной фольклористики – собирание народной музыки, нотирование, издание и исследование. Считаем необходимым особо подчеркнуть взаимосвязь, как бы сращение этих сфер в деятельности А. Пахлеванян.

Предметом ее тщательного исследования становятся большей частью ею же обнаруженные, нотированные и изданные фольклорные образцы, что, как известно, является наиболее естественным, результативным, перспективным ходом деятельности каждого музыковеда-фольклориста. В течение многих лет в Ереване, Ленинкане (Гюмри), Эчмиадзинском, Апаранском, Октемберянском, Баграмянском, Разданском, Артикском районах республики А. Пахлеванян записала на магнитофон около 2500 образцов народной музыки, которые представляют самые различные армянские этнографические пояса с их своеобразными музыкальными и языковыми диалектами, песенными и инструментальными жанрами.

Особое значение имеют выполненные ею нотировки. Нотирование народной музыки, как известно, трудная область. Наряду с тонким музыкальным слухом от нотировщика требуется также чувство национального, глубокое и всестороннее знание нотлируемого материала, связанное с его диалектными, жанровыми и другими признаками. Следует отметить, что с целью наиболее точной и подробной фиксации тончайших нюансов звуковысотности армянской народной музыки и целого ряда своеобразных особенностей исполнительской манеры, А. Пахлеванян, наряду с принятыми в музыкальной фольклористике условными знаками, применяет также созданные ею и прошедшие испытание временем особые, дополнитель-

ные знаки, которые распространились и сегодня с успехом применяются армянскими музыковедами-фольклористами. Выполненные ею, опытным, талантливым знатоком скрупулезные нотировки армянских народных песен и инструментальных наигрышей в возможной мере соответствуют звучащему оригиналу, отражая его важнейшие звуковысотные, мелодические, ритмические, ладовые и другие особенности. Они издаются в нотированных сборниках, способствуя сохранению, распространению, пропаганде армянской народной музыки, вовлекаются в научный оборот, развивая музыкально-фольклористическую и, в целом, музыковедческую мысль, вдохновляют композиторов на создание произведений в национальном духе и стиле. Большая часть нотировок А. Пахлеванян уже издана в составленных ею же и иных сборниках, а другая часть еще находится в рукописи. Это – сотни ценных записей, которые хранятся в архиве кафедры армянской музыкальной фольклористики Ереванской государственной консерватории имени Комитаса, ожидающая счастливой возможности издания.

Параллельно с собирательской деятельностью и нотированием А. Пахлеванян с той же энергией и вдохновением занимается подготовкой к печати и изданием сборников народной музыки, помещая в них также и собственноручно собранные и нотированные образцы. Она является главным редактором серии «Армянские народные песни и наигрыши», издаваемой кафедрой армянской музыкальной фольклористики консерватории. Уже вышли в свет 13 томов, готовятся к изданию два новых тома.

Сборники, составленные ею и в соавторстве с коллегами, выделяются четкой систематизацией материала и высоким научным уровнем. Они посвящены народной музыке как различных районов республики, особенно Апаранского, так и исторической Армении – Васпуракана, Муша, Сасуна – регионов, которые являются древнейшей колыбелью и богатейшей сокровищницей армянской народной песни, которая вследствие различных бедствий, войн, геноцида армян, насильственных переселений, будучи оторванной от родившей и питающей ее земли, естественной среды бытования, подвержена безвозвратной утере. В этом смысле особое значение приоб-

ретаат известный не только у нас, но и за рубежом, ставший библиографической редкостью сборник «Родные песни», который в армянской действительности до последнего времени был уникальным, как содержащий материал, записанный от одного информанта – Айрика Мурадяна, уроженца Шатахского района Васпураканской области, истинного носителя родного фольклора, талантливого исполнителя. Сейчас уже готов к изданию новый сборник «Танкагин аванд» («Бесценный завет»), составленный А. Пахлеванян из нотированных ею песен, напетых известным апаранцем – Ишханом Карапетяном, чьи предки были переселенцами из Муша и Алашкерта исторической Армении. Весьма ценен и «Талин» – как сборник, представляющий этнографический регион Муш-Сасун.

Составленные А. Пахлеванян сборники, будучи записаны от информантов родом из Васпуракана, Муша, Сасуна или от их потомков, наряду со ставшими классическими «Акнийскими песнями» Комитаса, «Ванскими песнями» Сп. Меликяна и Г. Гардашяна, этнографическим наследием М. Тумачана, являются наиболее достоверным источником народного музыкального творчества западных армян.

Достоверным источником музыкальной эпики, одной из блестящих страниц музыкального творчества армянского народа, является составленный А. Пахлеванян свод поющих фрагментов эпоса, который стал частью изданного в США исследования, посвященного героическому эпосу «Сасунские богатыри» (в соавторстве с филологом-эпосоведом А. Саакян). Этот свод является ныне наиболее полным изданным музыкальным материалом эпоса. Он содержит записи Комитаса, Сп. Меликяна, А. Кочаряна, В. Самвеляна и многочисленные ранее изданные и не изданные записи самой А. Пахлеванян. В числе этих 20 образцов «Военный клич Мсра Мелика», «Давид на поле боя», «Обращение Давида к дяде», «Жаль тысячу раз» и др., а также восемь вариантов своеобразного пролога «Помилуй», имеющего стержневое значение для всех четырех ветвей эпоса.

Кроме вышеназванного свода в книге впервые опубликованы комитасовские записи поющих фрагментов эпоса «Сасунские богатыри», которые были сделаны от садовника Эчмиадзинского храма

Хапоенц Затика, родом из Мокса Васпураканской области исторической Армении. Этот бесценный материал (13 поющих фрагментов), расшифровав из хранящихся в архиве черновиков Комитаса и переведя с армянской нотописы на европейскую, А. Пахлеванян ввела в научный обиход еще в 1996 году.

Интересна история с эпическим сказом «Карос хач» («Каросский крест»), музыкальное воплощение которого до последнего времени было известно лишь в виде нотной записи небольшого начального фрагмента, сделанного в свое время Комитасом и Сп. Меликяном. Благодаря обнаружению в конце XX века Алиной Пахлеванян магнитофонных записей трех вариантов полного сказа и сделанных с них расшифровок, удалось получить целостные тексты, исследовать их и издать отдельной книгой. Таким образом, этот сказ, являющийся одной из бесценных жемчужин армянской музыки, созданный в раннем средневековье в Васпуракане, впервые в армянской музыкальной фольклористике предстал в своем наиболее целостном виде со всем комплексом музыкально-поэтических компонентов: развернутым прологом, песенными фрагментами, речитацией, декламацией, эпилогом.

С нотировками А. Пахлеванян и в соавторстве с нею вышел в свет сборник «Великая Отечественная война в армянских народных и гусанских песнях», уникальный на всем пространстве бывшего Советского Союза, отражающий чувства и мысли армянского народа о великой войне. Поэтические переводы текстов песен на русский язык выполнены А. Пахлеванян.

Следует добавить, что в процессе издания нотированных сборников армянской народной музыки проявилась одна очень важная грань ее творческой индивидуальности. Она сейчас является известным в нашей фольклористической среде и не имеющим конкурентов переводчиком оригинальных текстов армянских народных песен на русский язык, которая в состоянии наилучшим образом сохранить и отразить в русских поэтических переводах все обаяние, специфический «вкус и цвет» оригинала.

Следует упомянуть также нотированный сборник «Пой, соловей», составленный А. Пахлеванян (Ереван, 2019). Он адресован

юношеству, состоит из песен, содержанием, идейно и мелодически доступных, понятных и соответствующих возрастной психологии и представлениям детей (50 образцов). Они в основном взяты из известных, изданных собраний классиков армянской музыкальной фольклористики Комитаса и его учеников – Сп. Меликяна М. Тумачана, а также из богатого репертуара известного носителя народной песни – Айрика Мурадяна. В сборник включены также варианты ряда любимых и распространенных в быту армян песен, тексты которых адаптированы к возрастным особенностям детей и юношества. В процессе переработки некоторых текстов Пахлеванян воспользовалась известным трудом М. Абега, в котором содержится несколько тысяч народных «хагигов».

Материал сборника представлен в традиционном для армянского народного пения одноголосном виде. Рядом с ним, в качестве приложения, А. Пахлеванян представляет 5 образцов в его же составленном двухголосии, соединив с мелодией песни ее же вариант или сочинив для нее новую подголосочную линию в духе народной песни.

Сборник имеет важное значение прежде всего своей уникальностью: в многочисленном ряду нотированных сборников армянской народной музыки есть совсем немного образцов, адресованных детям. К тому же настоящий сборник дает возможность молодому поколению в условиях современных перемешанных, чуждых влияний «вернуться» к национальным истокам при помощи жемчужин народной музыки, соприкоснуться с посвященной благу отечества деятельностью великих армян, а также при помощи родного музыкального языка освоить многоголосие. Сборник может быть использован как в профессиональных, так и в не профессиональных детских учебных заведениях. Выбором материала и методом его систематизации данный сборник может стать примером для создания других подобных сборников.

Исследование народной музыки – неотъемлемая часть музыкально-фольклористической деятельности А. Пахлеванян. Она обращается к наиболее основополагающим и сравнительно мало освещенным сферам, рассматривая большей частью песни и инстру-

ментальную музыку «предпочтимых» этнографических регионов – Васпуракана, Муша, Сасуна.

Нотированием народной музыки А. Пахлеванян занимается не только на практике. Теории этой важнейшей, первичной, полной проблем области посвящена ее кандидатская диссертация «Принципы нотирования народной музыки на современном этапе развития фольклористики (на примере песен Талинского района)», которая стала у нас первым и сегодня единственным исследованием. В диссертации обобщены сформировавшиеся и разработанные в течение многолетней плодотворной деятельности воззрения, принципы, которые призваны обогащать и процесс, и теорию нотирования народной музыки. А. Пахлеванян обращается также к одному из «краеугольных камней» музыкальной фольклористики – музыкальной диалектологии. Следует отметить, что армянские музыкальные многочисленны и многообразны диалекты ныне еще нуждаются в различных исследованиях, которые чрезвычайно важны, и более, получают особенно злободневное значение в условиях нахождения музыкальных диалектов западных армян перед опасностью искажения, забвения. Исследования А. Пахлеванян касаются непосредственно этого вопроса. Предметом ее рассмотрения являются музыкально-диалектные черты этнографического региона Муш-Сасун. Выявлены и изучены песенные типы, мелодические обороты, ритмические структуры, принципы формообразования, характерные для народной музыки региона, которые одновременно сравнивались со сходными явлениями народной музыки Васпуракана. В результате исследования был обнаружен имеющий специфическое звучание лад, который А. Пахлеванян предлагает называть «таронским».

Исследовательские интересы Пахлеванян обращены также к эпическому музыкальному творчеству армянского народа. Имеется в виду сравнительное изучение музыкально-поэтических текстов вариантов эпического сказа «Карос хач», исследование поющих фрагментов героического эпоса «Сасунские богатыри», определение специфики их мелодического мышления, восприятие их как способ омузыкаленного эпического сказывания, а не песни в жанровом

смысле. Этим и обусловлено известное однообразие поющих фрагментов.

Все свое умение музыковеда-фольклориста, богатый, содержательный опыт А. Пахлеванян щедро, без остатка передает молодежи. Она – одна из самых любимых, известных, авторитетных педагогов консерватории. Терпеливо, с любовью и преданностью своему делу она воспитывает будущих музыковедов-фольклористов: ее специальный класс окончили 40 выпускников, почти все с отличием. Это – представители пахлеваняновской школы, хорошо знающие свое дело, безгранично любящие профессию – собиратели музыкального фольклора, нотировщики, исследователи, которые в состоянии трудиться во всех областях народной, гусанской и ашугской музыки.

В своем труде последних лет «Особенности ритмики армянского музыкального фольклора», который стал учебником для консерватории и музыкального колледжа (Ереван, 2014), Пахлеванян, руководствуясь наблюдениями Комитаса и развивая выдвинутые им положения, представляет и подробно исследует времяизмерительную (квантитативную, основанную на соотношении коротких и длинных слогов) сущность одного из важнейших составляющих армянского народного песенного творчества – ритма. Цель работы – максимально уточнить, обогатить и пополнить знания студентов в области армянской народной музыки. Одновременно следует отметить, что эта работа является одной из наиболее ценных в армянской музыкальной фольклористике за последние годы.

Будущим музыкантам, но на этот раз студентам магистратуры консерватории обращен труд А. Пахлеванян «Современные проблемы армянской музыкальной фольклористики» (Ереван, 2018). Он предусмотрен для одноименного предмета в магистратуре и уже с успехом и результативно применяется на практике. Как пишет автор, «... в пределах данного курса фольклор рассматривается не только с точки зрения эстетики как вид народного искусства, но также и как социальное явление которое требует всестороннего изучения в тесной связи с целым рядом гуманитарных наук, таких как этнография, устное словесное творчество, диалектология, история,

география, психология и др.» (стр. 5-6). Именно этой цели служит указанный труд, который является плодом многолетних наблюдений, размышлений многоопытного, искусного, видного музыковеда-фольклориста и несомненно стимулирует дальнейшее развитие армянской музыкальной фольклористики.

Говоря об учебно-методической деятельности Пахлеванян, прибавим также, что она в соавторстве с профессором Ереванского Педагогического университета Юрием Юзбашяном создала предназначенные для преподавания предмета «Музыка» в общеобразовательной школе учебники и методические пособия для учителей.

В течение 26 лет А. Пахлеванян руководила кафедрой армянской музыкальной фольклористики консерватории, которая в действительности, своей многогранной деятельностью (здесь преподаются и изучаются все ветви армянской традиционной музыки – народная, гусанская, ашугская, средневековая духовная и светская) является учебным и научным центром музыкальной арменистики. Кафедру Пахлеванян «унаследовала», по ее же образному определению, как «богатый, обустроенный дом», от профессора Маргариты Арамовны Брутян, многолетнего руководителя Кабинета народного музыкального творчества, основанного по ее же инициативе в честь 100-летия со дня рождения Комитаса в 1969 году, на базе которого в 1988 году была учреждена Кафедра музыкальной фольклористики консерватории, первым руководителем которой стала именно она – М. А. Брутян. Пахлеванян унаследовала кафедру и свято сохранила основанные здесь и в течение лет устоявшиеся профессиональные традиции, а также высокие этические критерии. Под руководством А. Пахлеванян почти три десятилетия трудился и сейчас продолжает успешно трудиться известный своей неотступной, непоколебимой принципиальностью, преданный народной музыке дружный коллектив «безумцев» (по определению М. Брутян), старшие и младшие члены которого являются опытными педагогами, известными учеными как в республике, так и за рубежом.

Интенсивная профессиональная деятельность А. Пахлеванян всегда гармонично переплеталась с ее семейной жизнью. Она всегда

